# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 03

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում
**28.04.2012թ.** տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

**Մասնակցում էին՝**

**Ս.Կարապետյան** ՀՀ գյուղատնտեսության նախարար
**Ս.Սահակյան** ՀՀ Արագածոտնի մարզպետ
**Ա.Արսենյան** ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
**Մ.Առաքելյան** ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
**Հ.Գևորգյան** ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
**Հ.Օհանյան** ՀՀ ՏԿՆ ներկայացուցիչ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2012 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի մասին /Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Յու. ԱՁԱՏՅԱՆ /:

2. Համայնքային սեփականության պատկանող հողատարածքների վարձակալության տրամադրման մասին / զեկ. Մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ՝. Գ. ՕՀԱՆՅԱՆ/:

3. Գույքահարկի, հողի հարկի և հողի վարձավճարի գանձման ցուցանիշների մասին / զեկ. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ/:

4. ՀՀ Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի /*նախընտրական քարոզչություն*/ պահանջների կատարման մասին / ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/:

5.Այլ հարցեր և հայտարարություններ:

Կից՝ զեկուցողների զեկուցագրերը:

**ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ**

--- Ամփոփելով քննարկված հարցերը,մարզպետը ընդգծեց համայնքների ղեկավարների կողմից պարարտանյութի և դիզելային վառելանյութի ներկրման,հողօգտագործման օրենսդրական դաշտը կանոնավորելու,ինչպես նաև սեփական եկամուտների հավաքագրման գործընթացները ժամանակին և որակով իրականացնելու անհրաժեշտությունը:

Նա խոսեց նաև ՀՀ Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի պահանջների կատարման մասին և ասաց,որ մայիսի 6-ին կայանալիք Ազգային Ժողովի ընտրություններում բացառվելու է որևէ խախտում:Դա վերաբերում է թե՝ ճշգրիտ և կանոնավոր ընտրացուցակների առկայությանը, և թե՝ քվեարկության ընթացքին:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

**--- Արագածոտնի երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոնի գլխավոր մասնագետ՝ Թ.Խոյեցյան**

---Միգրացիայի հարցերով մարզում անցկացվող դասընթացներին համայնքի ղեկավարների կողմից աջակցելու վերաբերյալ:

**Ս.ՍԱՀԱԿՅԱՆ**